



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱԿԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

19.11.2019Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 9 անդամները:

Բացակայում են Հ.Գրիգորյանը, Կ.Դավթյանը, Գ.Երիցյանը, Տ.Եփրեմյանը, Պ.Մնացականյանը, Ա. Փանոսյանը :

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝
Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալթաբյանը, Ա. Ծերունյանը, Ա.Ջաքարյանը, Գ.Աֆյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 8 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 87-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
2. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:
3. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -8

դեմ - 1

ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. **Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 87-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:**

/Ձեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով՝ հաշվի առնելով, քաղ., ճարտ., գյուղ. և բնակկոմ. տնտես. բաժնի պետ Բ. Բալբաբյանի 2019 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 3711/04, կրթ., մշ., սպ. երիտ. և սոց. աջակցության բաժնի պետ Ա. Զաքարյանի 2019 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 3691/04 և ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի պետի Ժ/պ Գ.Աֆյանի 2019 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 3714/04 զեկուցագրերը. **առաջարկում եմ** կատարել լրացումներ և փոփոխություններ 2019 թվականի հաստատված բյուջեում:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8

դեմ -1

ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. **Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն փալու մասին:**

/Ձեկ. Վ.Չիլինգարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և 77-րդ հոդվածով՝ **առաջարկում եմ** տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու՝ համաձայն ներքոնշյալ քաղաքացու դիմումի.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	ՀԱՍՑԵՆ	ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ Է ՀԱՏԿԱՑՎՈՒՄ	ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ
1.	Արման Խաչատրյան	8-20-36	4 617 000	Սեփականություն	Անհատույց

Համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարվելիք փոփոխությունները ներկայացնել օտարման գործընթացն ավարտելուց հետո:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-9

դեմ -0

ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3.Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Բջնի գյուղի 7-րդ փողոցի 29 տան բնակիչ **Սարգիս Նորայրի Սրեփանյանի** 2019 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 3749-16, դիմումը ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով առաջարկում եմ Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 100.0 հազ. դրամ հատկացնել **Սարգիս Նորայրի Սրեփանյանին**:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Քվեարկության եմ դնում որոշումը

Կողմ-9

դեմ-0

ծեռնպահ-0


Բաբայան Վալերի 

Բաբայան Նարեկ 

Գասպարյան Մելիք 

Գասպարյան Անատոլի 

Խլղաթյան Արսեն 

Սահակյան Երեմ 

Վարդանյան Նորայր 

Վարդանյան Սարգիս 

Վարդանյան Նորիկ 

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ.Կ.ՇԱՀԳԱԼՈՅԱՆ 